



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 սեպտեմբերի 2024 թվականի N1009-Ա

**ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-008-0049-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Սաթո Ռաֆայելի Բաղդասարյանի (անձնագիր՝ AU0395188, տրված 19/10/2020թ.) դիմումը (մուտք՝ 19/09/2024-ին, ՔԴ-944-24), Տաշիրի համայնքապետարանի կողմից 11 հունվար 2024 թվականին տրված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի(գրանցամատյան՝ 2883) վկայագիրը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,087349 հա բնակելի կառուցապատման հողամասը և 1980թ-ին կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- 1.Օրենքի ուժով ճանաչել Սաթո Ռաֆայելի Բաղդասարյանի, Ժաննա Ալբերտի, Լիանա Ալբերտի և Արման Ալբերտի Հակոբյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0049-0014 կադաստրային ծածկագրում գտնվող 0,087349հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Սաթո Ռաֆայելի Բաղդասարյանի, Ժաննա Ալբերտի, Լիանա Ալբերտի և Արման Ալբերտի Հակոբյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0049-0014 կադաստրային ծածկագրում գտնվող 0,087349 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 23

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 սեպտեմբերի 2024 թվականի N1010-Ա

**06-008-0277-0008 ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ  
ՉԱՓԵՐԸ ԾՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «ՆԱՎԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Քերոբ Տոմերյանի (նույնականացման քարտ՝ 014852511, տրված 15.02.2023թ.) դիմումը (մուտք՝ 12/09/2024-ին, ՏԴ-41-24), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 2461017 տրված՝ 27.03.2008թ վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի իրադրական հատակագիծը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճշտել 06-008-0277-0008 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանային չափերը, համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակամանն պահից հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 23

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 սեպտեմբերի 2024 թվականի N 1011-Ա

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-074-0068-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Սոֆիկ Էդուարդի Բրսոյանի (անձնագիր՝ AR0437541 տրված 25/08/2017թ) դիմումը (մուտք՝ 09/09/2024-ին, ՔԴ-912-24), Տաշիրի համայնքապետարանի կողմից 20 հունիսի 2024 թվականին տրված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի(գրանցամատյաններ՝ 2741 և 2742) վկայագրերը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 12-ի «Հայմաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրիանական հատկացված 0,06952 հա բնակելի կառուցապատման հողամասը և 1975թ-ին կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Օրենքի ուժով ճանաչել Սոֆիկ Էդուարդի, Մարգար Ստեփանի և Արեգնազ Ստեփանի Բրսոյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0068-0004 կադաստրային ծածկագրում գտնվող 0,06952 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:



2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Սոֆիկ Էդուարդի, Մարգար Ստեփանի և Արեգնազ Ստեփանի Բրտյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0068-0004 կադաստրային ծածկագրում գտնվող 0,06952 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0068-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Խ. Աբովյան փողոց, 34 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2112) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06132PMMA26V:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 23

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 սեպտեմբերի 2024 թվականի N 1012-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1009-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի «Լոռու մարզի Տաշիրի համայնքի վարչական տարածքում գտնվող 06-008-0049-0014 կադաստրային ծածկագրով հողամասի և շինությունների նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 1009-Ա որոշման վերնագրում, 1-ին կտում և 3-րդ կետում «համատեղ» բառերը փոխարինել «բաժնային» բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**



2024թ. սեպտեմբերի 23

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 սեպտեմբերի 2024 թվականի N 1013-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Վալենտինա Մաքսիմի Գորոդկովային սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 2461008, տրված 18.03.2008թ) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 12.09.2024թ.-ի թիվ ԲԴ-928-24)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Վալենտինա Մաքսիմի Գորոդկովային սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-092-0108-0052 կադաստրային ծածկագրով 1.4 հա խոտհարք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գոյքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 24

ք.Տաշիր







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1014-Ա

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-076-0003-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Արզամ Մելիքի Մովսիսյանի (անձնագիր՝ AR0603696 տրված 27/02/2018թ) կողմից լիազորված անձի՝ Էդուարդ Միշայի Չատինյանի (անձնագիր՝ AS0587483 տրված 15/05/2019թ) դիմումը (մուտք՝ 11/09/2024-ին, ԲԴ-922-24), Տաշիրի համայնքապետարանի կողմից 24 հունիսի 2024 թվականին տրված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի(գրանցամատյան՝ 2790) վկայագիրը, «Արտյոն Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, դեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 1,20811 հա բնակելի կառուցապատման հողամասը և 1961-1981թթ-ին կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Օրենքի ուժով ճանաչել Արզամ Մելիքի Մովսիսյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Նորամուտ 06-076-0003-0009 կադաստրային ծածկագրում գտնվող 1,20811 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:



2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Արտյոն Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Արգամ Մելիքի Մովսիսյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Նորամուտ 06-076-0003-0009 կադաստրային ծածկագրում գտնվող 1,20811 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Նորամուտ 06-076-0003-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Նորամուտ, 2-րդ փողոց, 5 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2105) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06092ZSBPU3U:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1015-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և՛ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումով՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-008-0039-0001 կադաստրային ծածկագրով պատկանող անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Լենինի փողոց, 1ա հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Կ. Դեմիրճյան փողոց, 1/1 բնակելի տուն (փոստային դասիչ՝2101) հասցե, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06011KGUTNYV:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N1016-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա 06-077-0006-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա, 1-ին փողոց, 106 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2113) հիսսցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06152YP4NGCC:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1017-Ա

**06-008-0277-0046 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ  
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արկադի Միխայիլի Ղուկեյանի (անձնագիր՝ AT0524525, տրված՝ 27.07.2020-ին) դիմումը, (մուտք՝ 23/09/2024-ի ՔԴ-950-24), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 16092021-06-0026 տրված 16.09.2021թ. և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով, 7-րդ հոդվածի 16-րդ ենթակետով, 8-րդ հոդվածի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Լոռու մարզի մարզպետի 11 հունիսի 2024թ. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի-Ճ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը տարածքային հատակագծման մասով հաստատելու մասին N 319-Ա որոշումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, քաղաք Տաշիր վարչական տարածքում գտնվող 06-008-0277-0046 կադաստրային ծածկագրով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 0,26411հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հանձնարարել համապատասխան բաժնին ներկայացված փաստաթղթերի հիման վրա նշված անշարժ գույքի վերաբերյալ կատարել փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1018-Ա

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0287-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Ռոզա Արմենակի Ենգոյանի (անձնագիր՝ AU0439830, տրված 24/09/2021թ.) դիմումը (մուտք՝ 17/09/2024-ին, ՔԴ-935-24), Տաշիրի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 30 սեպտեմբերի 1989-ի որոշումից տրված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի(գրանցամատյան՝ 2858) վկայագիրը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,067349 հա բնակելի կառուցապատման հողամասը և 1992թ-ին կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Օրենքի ուժով ճանաչել Ռոզա Արմենակի Ենգոյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0287-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 0,067349 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:



3. Օրենքի ուժով ճանաչել Ռոզա Արմենակի Ենգոյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0287-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 0,067349 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N1019-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 02-Ի N 1117-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 02-ի «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1117-Ա որոշման 1-ին կետի 1) ենթակետում «06-100-0201-0088» թվերը փոխարինել «06-100-0201-0098» թվերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1020-Ա

**ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ԼԱՌՐԱ ՍԱՐԳԻՍԻ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԵՎ ԼԵՎՈՆ ՍԱՐԳԻՍԻ  
ՀԱԿՈՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ, 134-րդ և 135-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշումով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին կից «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը՝ հաշվի առնելով անչափահաս երեխաներ Լաուրա Սարգիսի Հակոբյանի և Լևոն Սարգիսի Հակոբյանի առանց ծնողական խնամքի մնալու փաստը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Անչափահաս երեխաներ Լաուրա Սարգիսի Հակոբյանի և Լևոն Սարգիսի Հակոբյանի սահմանել խնամակալություն և խնամակալ նշանակել Վարդանուշ Սերգեյի Պապյանին:
2. Հսկողություն սահմանել երեխաներ Լաուրա Սարգիսի Հակոբյանի և Լևոն Սարգիսի Հակոբյանի խնամակալ Վարդանուշ Սերգեյի Պապյանի գործունեության նկատմամբ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**



2024թ. սեպտեմբերի 25

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1021-Ա

**ԿՈՒՄՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ  
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

04.07.2024-ին «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Վիրաբյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքել են թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների մատուցման գնման (N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/64) պայմանագիր, որի համաձայն՝ կատարողը ստանձնել է թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետները:

Տաշիրի համայնքապետարանը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/64 ծածկագրով պայմանագրի 2.1.3-րդ կետի պահանջներով, 05.09.2024-ին միակողմանի լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ հայտարարությունը 05.09.2024-ին հրապարակվել է տեղեկագրում, և 06.09.2024-ի դրությամբ Պայմանագիրը համարվում է լուծված:

«ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ն առաջարկվել է տասնօրյա ժամկետում տուժանքի ձևով, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ և 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին:

«ԿՈՒՄՆԻ» ՍՊԸ-ի կողմից որակավորման և պայմանագրի ապահովումները չեն վճարվել:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N 1022-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 58-րդ, և 60-րդ կետերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-072-0005-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,22785 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Կրուգլայա շիշկա, 3-րդ փողոց, 5/3 հողամաս (փոստային դասիջ՝ 2111) հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագրի 06072P8ZA48P:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 26

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N 1023-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԻՄԻԿԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ  
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Սվետլանա Բաղդասարյան Սիմիկի»-ի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի N136-24 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, 9-րդ փողոց, տուն 19 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Սվետլանա Բաղդասարյան Սիմիկի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2024 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 26

ք.Տաշիր







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N 1024-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 924-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 924-Ա որոշման 1-ին կետի 1) ենթակետում « 0.6 հա» թվերը փոխարինել « 0.4 հա» թվերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**



2024թ. սեպտեմբերի 26

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N 1025-Ա

**06-099-0016-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Գառնիկ Ղուկասի Մարդոյանի (անձնագիր՝ AT0377049, տրված՝ 05.02.2020-ին) դիմումը, (մուտք՝ 13/05/2024-ի ՔԴ-500-24), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 20112018-06-0020 տրված 20.11.2018թ. և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով, 7-րդ հոդվածի 16-րդ ենթակետով, 8-րդ հոդվածի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և 4-րդ ենթակետի գ) պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Լոռու մարզի մարզպետի 11 հունիսի 2024թ. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը տարածքային հատակագծման մասով հաստատելու մասին N 319-Ա որոշումը, միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, գյուղ Սարատովկայի վարչական տարածքում գտնվող 06-099-0016-0005 կադաստրային ծածկագրով 0,188հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման հողերի:

2. Հանձնարարել համապատասխան բաժնին ներկայացված փաստաթղթերի հիման վրա նշված անշարժ գույքի վերաբերյալ կատարել փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N 1026-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱԶԱՏ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ  
ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ազատ Ռաֆայելյան»-ի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի N 137 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 204 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ազատ Ռաֆայելյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2024 թվականի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 26

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N1027-Ա

**ՀԱՄԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ  
ՏԱՇԻՐ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ 8 ՇԵՆՔ ՅԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ  
ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Կարեն Մոսիի Մարգարյանի (անձնագիր՝ BA3435031, տրված՝ 11.06.2019-ին) դիմումը (մուտք՝ 25/09/2024-ի ՔԴ--955-24), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 10122021-06-0038, տրված 10.12.2021-ին, «Արտյոն Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023AWAFMQ ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88-Ն որոշման դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ, ինքնակամ կատարված ներքին փոփոխությունները կատարված են քաղաքաշինական նորմերի ոչ էական խախտումներով և չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր համայնքի, քաղաք Տաշիր, Գետափնյա փողոց 8 շենք, թիվ 3 հասցեով բնակարանի գործառնական նշանակությունը փոխել փոփոխել վարսավիրանոցի գործառնական նշանակության:
2. Ճանաչել օրինական Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր համայնքի, քաղաք Տաշիր, Գետափնյա փողոց 8 շենք, թիվ 3 հասցեով բնակարանում ինքնակամ կատարված ինքնակամ փոփոխությունները՝
  - 1) թվով 4 պատուհան,
  - 2) թվով 9 դուռ,
  - 3) թվով 9 միջնորում,







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2024 թվականի N 1028-Ա

**ՆԵԼԻԿ ԱԹԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԻՆԵ ԱԹԱՆՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

